



№ 9,10 Հայկական բժշկական ինստիտուտ <<ԷՐԵՐՈՒՆԻ>> Բժշկական կենտրոն (անվճար)

ԵՐԱՆՏԱՊԱՐՏ ԵՆՔ ՔԵԶ, ՍԻՐԵԼԻ ՀԲԻ

Մենք՝ Հայկական բժշկական ինստիտուտի շրջանավարտներս, տարիներ առաջ, վստահելով արդեն Alma Mater դարձած մեր բուհին, նրա գիրկը եկանք, ուսում առանք, նրա հետ միասին բազում դժվարություններ ու խոչընդոտներ հաղթահարեցինք ու կայացանք՝ ՀԲԻ-ն որպես բժշկական կադրերի պատրաստման դարբնոցի, մենք որպես բժիշկ-մասնագետների: Մասնագետներ, ովքեր տարիներ շարունակ ապացուցեցին իրենց կենսունակությունը բժշկագիտության եւ տեսական, եւ գործնական բնագավառներում: Ի դեպ, ոչ միայն մեր հանրապետության, այլ նաեւ արտերկրի շատ հեղինակավոր բժշկական ու գիտական հաստատություններում:

Դժվարին ու անակնկալներով լի բժշկագիտության ասպարեզում կարողացանք մեր տեղը նվաճել հարուստ գիտելիքների, մեզ դասավանդած պրոֆեսորա-դասախոսական կազմի ավանդած պատգամների շնորհիվ:

Այսօր մեր զավակներն են նույն հաջողությամբ ուսում առնում ՀԲԻ-ում: Ու նրանց թիվը գնալով ավելանալու է, քանի որ դեռեւս 3 տասնամյակի կենսագրություն ունեցող բուհը շատ սերունդների է կրթելու՝ իր թոռներին, ծոռներին...

Սիրելի ՀԲԻ

Մենք՝ տարբեր տարիների շրջանավարտներս, մեր երախտիքի խոսքն ենք հղում քեզ

եւ ասում՝ Շնորհակալություն:

ՀԲԻ-ի շրջանավարտների անունից՝

Լուսինե Ոսկանյան

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ՌԴ առողջապահության
 փոխնախարարը՝
 «Էրեբունի» ԲԿ-ում

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Մեր ուսանողներն

Մեր շրջանավարտները

ԱՄՓՈՓ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌԴ առողջապահության փոխնախարարը՝ «Էրեբունի» ԲԿ-ում




ՌԴ առողջապահության փոխնախարար Տատյանա Սեմյոնովայի գլխավորած պատվիրակությունը ս. թ. հոկտեմբերի 21-ին այցելեց «Էրեբունի» բժշկական կենտրոն: «Էրեբունի» ԲԿ հիմնադիր Հարություն Քուշկյանի ուղեկցությամբ ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը և ՌԴ առողջապահության փոխնախարար Տատյանա Սեմյոնովան նախ շրջեցին բուժկենտրոնի նորաբաց բաժանմունքներում, ծանոթացան ԲԿ-ի ախտորոշիչ ծառայությունների հնարավորություններին: Բուժանձնակազմի հետ հանդիպման ժամանակ պրոֆեսոր Քուշկյանը, ողջունելով հյուրերին, կարևորեց հայ-ռուսական համագործակցությունը և իր պատրաստակամությունը հայտնեց օժանդակելու հետագա համատեղ ծրագրերին՝ ի շահ Հայաստանի առողջապահական համակարգի զարգացման: Հարություն Քուշկյանը, որպես առողջապահության կազմակերպիչ, բարձր գնահատեց վերջին շրջանում առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումները, ծրագրերը և հույս հայտնեց, որ դրանք շարունակական և առավել արդյունավետ են լինելու:

«Էրեբունի» ԲԿ-ի ցերեքրովասկուլյար նյարդավիրաբուժության բաժանմունքի ղեկավար Դավիդ Սահակյանը ներկայացրեց Հայաստանի առողջապահական համակարգում ներդրված երկու խոշոր՝ Իշեմիկ սուր կաթվածի և Սանավիացիայի պետական ծրագրերը, որոնք հաջողությամբ իրականացվում են «Էրեբունի» ԲԿ-ում: Դավիդ Սահակյանը, մասնավորապես, ներկայացրեց 2019թ-ից մեկնարկած ծրագրերի նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը, նշելով, որ մինչ այժմ ինսուլտի պետական ծրագրով 249 հիվանդ ստացել է անհրաժեշտ բուժօգնություն պետության հաշվին, և որ այդ ցուցանիշը 10 անգամ ավելին է 2018թ. համեմատ: Վկայակոչելով Սանավիացիայի ծրագիրը՝ ցերեքրովասկուլյար նյարդավիրաբույժը շեշտեց, որ ապրիլից մեկնարկած ծրագիրը մեծ աջակցություն է ոչ միայն իշեմիկ

ինսուլտի, այլև անհետաձգելի այլ դեպքերի համար, որը ևս ֆինանսավորվում է պետության կողմից:

ՌԴ առողջապահության փոխնախարար Տատյանա Սեմյոնովան իր գոհունակությունը հայտնեց այս ծրագրերի աննախադեպ արդյունքների վերաբերյալ և շնորհավորեց հայ գործընկերներին՝ կարճ ժամանակահատվածում նման ցուցանիշներ գրանցելու առիթով: ՌԴ առողջապահության փոխնախարարը վստահեցրեց, որ հետագայում շարունակվելու է համագործակցությունը ՀՀ առողջապահության նախարարության, «Էրեբունի» ԲԿ-ի հետ՝ Հայաստանում նոր ծրագրեր կյանքի կոչելու հարցում:

ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը, մեկ անգամ ևս ծանոթանալով ներկայացված ծրագրերի ցուցանիշներին, շեշտեց նախարարության քաղաքականության ուղղությունները և իր գոհունակությունը հայտնեց արձանագրված արդյունքների վերաբերյալ:



Էլաստոգրաֆիա՝ «Էրեբունի» ԲԿ-ում

«Էրեբունի» ԲԿ-ում կատարվում է նաև ուլտրաձայնային հետազոտության բնագավառում կիրառվող ամենավերջին մեթոդներից մեկը՝ էլաստոգրաֆիան: Այս մեթոդը հնարավորություն է տալիս գնահատել հյուսվածքների էլաստիկությունը, դրանով իսկ տարբերակելով տարբեր օրգանների բարորակ և չարորակ գոյացությունները:

Էլաստոգրաֆիան ոչ ինվազիվ, անցավ, անվնաս մեթոդ է, որը թույլ է տալիս հաստատել կամ հերքել բարակ-ասեղային ասպիրացիոն բիոպսիայի անհրաժեշտությունը:

Էլաստոգրաֆիան լայնորեն կիրառվում է վահանագեղձի, կրծքագեղձերի գոյացությունների, ինչպես նաև լյարդի ֆիբրոզների ախտորոշման ժամանակ: «Էրեբունի» ԲԿ ուլտրաձայնային հետազոտման ծառայությունում էլաստոգրաֆիան կատարվում է նորագույն Toshiba Aplio I 800 ուլտրաձայնային սոնոգրաֆով:

Միջուկային բժշկության եվրոպական կենտրոն «Էրեբունի» ԲԿ-ում



Միջուկային բժշկությունն ատոմաբանության ամենանորարարական ուղղությունն է ողջ աշխարհում: Իզոտոպների միջոցով այսօր արդեն բուժելի են նախկինում անբուժելի համարվող, այդ թվում ուռուցքային մի շարք հիվանդություններ: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև Հայաստանում վահանաձև գեղձի հիվանդությունների խիստ տարածվածությունը, «Էրեբունի» ԲԿ-ում բացվեց միջուկային բժշկության եվրոպական կենտրոն:

Կենտրոնի գլխավոր ուղղություններից է վահանաձև գեղձի հիվանդությունների, մասնավորապես չարորակ ուռուցքների ախտորոշումը և բուժումը: Բուժումն իրականացվում է ռադիոակտիվ յոդի միջոցով՝ հատուկ կապարապատված հիվանդասենյակներում, եվրոպական չափորոշիչներին համապատասխան: Կենտրոնն ունի մեկուսացված 4 հիվանդասենյակ: Յուրաքանչյուր հիվանդասենյակ ունի առանձին կոյուղի, օդափոխման հատուկ համակարգ: Ամբողջությամբ լուծված են անվտանգության խնդիրները թե բուժանձնակազմի, թե հիվանդների համար: Կենտրոնում միաժամանակ կարող է բուժվել 6 հիվանդ: Կենտրոնն աշխատում է գերժամանակակից սարքավորումներով, այդ թվում գերմանական SIEMENS ընկերության արտադրության Գամմա խցիկով (SPECT), որն աշխարհում միջուկային բժշկության մեջ կիրառվող նորագույն ախտորոշիչ սարք է: Այն հնարավորություն է տալիս հայտնաբերել ոչ միայն վահանաձև գեղձի, այլև մյուս օրգանների ուռուցքային հիվանդությունները, ինչպես նաև սիրտ-անոթային և ոսկրային խնդիրները: Հետազոտություններն իրականացվում են ռադիոակտիվ իզոտոպներով:

«Էրեբունի» ԲԿ-ն պայմանագիր է ստորագրել իզոտոպ արտադրող եվրոպական ամենամեծ գործարաններից մեկի հետ, որտեղից էլ բերվելու են իզոտոպները: Հաշվի առնելով բժշկության այս բնագավառի առանձնահատկությունները, բժիշկների կողքին աշխատում են նաև հատուկ վերապատրաստված միջուկային ֆիզիկոսներ:

Կոն-ճառագայթային համակարգչային տոմոգրաֆիա՝ «Էրեբունի» ԲԿ-ում

«Էրեբունի» ԲԿ-ում բացվել է ռադիոլոգիական նոր՝ կոն-ճառագայթային համակարգչային տոմոգրաֆիայի ծառայություն: Այստեղ ներդրված է վերջին սերնդի արտադրության Acteon X Mind Trium տոմոգրաֆը, որը հնարավորություն է տալիս ախտորոշել դիմաճնոտային հատվածի բոլոր պաթոլոգիաները՝ ռենտգենյան նվազագույն ճառագայթմամբ:

Ինչպե՞ս ճիշտ կողմնորոշվել անաֆիլակտիկ շոկի դեպքում



Ինչպե՞ս ճիշտ կողմնորոշվել անաֆիլակտիկ շոկի դեպքում, և որոնք են ժամանակակից բուժման ամենավերջին ուղեցույցները: Անաֆիլակտիկ շոկի բուժման հիմնահարցերին նվիրված կոնֆերանսի ընթացքում «Էրեբունի» ԲԿ ալերգոլոգիական ծառայության ղեկավար Քրիստինա Ջամալյանը գործընկերներին է ներկայացրել խնդրի բուժման հիմնահարցերը:

Անաֆիլակտիկ շոկի բուժումը շարունակում է մնալ ալերգոլոգիական ամենաբարդ խնդիրներից, քանի որ առ այսօր այն համարվում է ամենավտանգավոր ալերգիկ ռեակցիաներից մեկն ամբողջ աշխարհում՝ հաճախակի մահվան դեպքերով:

Անաֆիլակտիկ շոկը զարգանում է կայծակնային, ուղեկցվում է զարկերակային ճնշման կտրուկ անկմամբ և գիտակցության կորստով: Պատճառ կարող են հանդիսանալ ինչպես տարբեր դեղամիջոցները, սնունդը (ալերգիա ծովամթերքից, կաթնամթերքից, ընդդեմից), այնպես էլ միջատի խայթոցը: Հիվանդության բուժման համար խիստ կարևոր է վայրկյանների արագությամբ ճիշտ բուժօգնության ցուցաբերումը:

Կոնֆերանսին մասնակցել են «Էրեբունի» ԲԿ անհետաձգելի բուժօգնության ծառայության բժիշկները, թերապևտները, նյարդաբանները, նեֆրոլոգները, էնդոկրինոլոգները, սրտաբանները, գաստրոէնտերոլոգները և վիրաբույժները:

ԽՃԱՆԿԱՐ ԽՃԱՆԿԱՐ ԽՃԱՆԿԱՐ

Երկարակեցության գաղտնիքը՝ պարեր և կրեատիվություն



Մենթ Չարլզից 104-ամյա Վերջինիա Լեյթները բացահայտել է երկարակեցության գաղտնիքը: Տարեց կնոջ խոսքով՝ կազմվածքը պահպանելու համար պետք է համաշխարհային միտումներից տեղյակ լինել և չվախենալ կրեատիվությունից:

The Daily Mail-ը հաղորդում է, որ չնայած մեծ տարիքին, Վերջինիան փորձում է ինչ-որ նոր բան սովորել, պարերի է հաճախում և լավատեսորեն է նայում աշխարհին: «Ես ուզում եմ պարել և ուրախանալ», -ասում է նա: Վերջինիան չի վախենում փոփոխություններից, նա հաճախել է համակարգչային գրագիտության դասընթացների, սովորել է կարել, պատկերասրահում իր նկարներն է ցուցադրել:

Նրա ծնողները, հորեղբայրները և քույրերը, նույնպես երկարակյաց են եղել:

Վերջին 20 տարիների ընթացքում ավելանում է երկարակյացների թիվը, այսինքն նրանց, ովքեր հատել են 100-ամյա շեմը: Կանխատեսումների համաձայն՝ 2050-ին աշխարհում կապրի 3.7 մլն երկարակյաց:

Վերջինիան նշում է՝ հավերժական պատանեկության բանալին ակտիվ կենսակերպն է, ամեն առավոտ նա ժամանակ է հատկացնում ֆիզիկական վարժություններին, հաճախ է գնում տեղական գրադարան: «Անցյալ տարիներին ես հասկացա, որ հարկավոր է կենտրոնանալ դրական պահերի վրա: Այն տանը, որտեղ ես ապրում եմ, բացել եմ լավատեսների ակումբ, որտեղ մարդիկ կարող են միասին հավաքվել կյանքի լուսավոր կողմին նայելու համար», -ասել է նա:

Դաջվածք. անե՞լ, թե՞ ոչ



Դաջվածք կամ պիրսինգ կատարած յուրաքանչյուր 5-րդ մարդը բախվում է առողջական խնդիրների: Առավել հաճախ վարակների, այրվածքների և այտուցի: Առանձին դեպքերում դաջվածք կատարելիս օրգանիզմում հայտնված վարակը կարող է անգամ վերաճել սեպսիսի: Այս մասին զգուշացնում են «Առողջապահության թագավորական միություն» բարեգործական կազմակերպության մասնագետները:



The Daily Telegraph-ը հայտնում է, որ մասնագետները վերլուծել են, որ դաջվածք կատարած ավելի քան 2.000 մարդու տվյալները, որպեսզի պարզեն նրանց ֆիզիկական և հոգեկան առողջության առանձնահատկությունները: Ստացված տվյալների համաձայն՝ գրեթե յուրաքանչյուր 5-րդ մարդը դաջվածք կատարելուց հետո բախվել է առողջական խնդիրների: «Յուրաքանչյուր 5-րդ մարդը ենթակա է մի շարք բարդությունների վտանգի, այդ թվում՝ այրվածքների կամ այտուցների», - հաստատել է «Առողջապահության թագավորական միության» գործադիր տնօրեն Շիրլի Քրամերը:

Մասնագետները պարզել են, որ դաջվածք կատարած անձանցից յուրաքանչյուր 10-րդը տարբեր առողջական խնդիրներով դիմել է մասնագիտական բուժօգնության: Այս ամենի հետ մեկտեղ, գիտնականների կարծիքով, ապագայում դաջվածքների տարածվածությունը միայն կաճի, քանի որ մարդիկ ակտիվորեն ինքնարտահայտում են որոնում, իսկ շատերը դաջվածքները դիտում են որպես իրենց անհատականությունն արտահայտելու միջոց:

Բժիշկն առանց ստետոսկոպի⁶



Հայտնագործումից 200 տարի հետո ստետոսկոպը՝ բժշկի մասնագիտության խորհրդանիշը, կարող է դուրս գալ գործածությունից, տեղեկացնում է AP-ը: Նրան փոխարինելու են գալիս սարքեր, որոնք հենվում են ուլտրաձայնային տեխնոլոգիաների, արհեստական բանականության և սմարթֆոնների հավելվածների վրա՝ բժիշկների ականջների փոխարեն: Հանրահոջակ սրտաբան, բժիշկ Էրիկ Թոպոլը ստետոսկոպը հնացած է համարում: «Մենք կարող ենք առաջ գնալ և ավելի լավը ստեղծել», - նշել է նա:

Վաղեմի ավանդության համաձայն՝ գրեթե յուրաքանչյուր բժշկական դպրոց ԱՄՆ-ում ուսանողներին տրամադրում է սպիտակ խալաթ և ստետոսկոպ: Վերջինիս օգտագործման հմտությունները դեռևս դասավանդվում են: Վերջին տասնամյակում տեխնոլոգիական արդյունաբերությունը փոքրացրել է ուլտրաձայնային սքաներների չափերն այնքան, որ դրանք նման են հեռուստացույցի հեռակառավարման վահանակի: Այն նաև ստեղծել է թվային ստետոսկոպներ, որոնք կարող են միացվել սմարթֆոններին շարժվող պատկերներ և ցուցումներ ստանալու համար:

Կողմնակիցներն ասում են, թե այդ սարքերը գրեթե նույնքան հեշտ են օգտագործման համար, ինչպես ստետոսկոպները, և թույլ են տալիս բժիշկներին հետևել մարմնի շարժումներին և տեսնել այնպիսի բաներ, ինչպիսին են փակ սրտի փականները:

Բժիշկ Փոլ Ուոլահը կարծում է, որ հաջորդ տասնամյակի ընթացքում շարժական ուլտրաձայնային սարքերը կդառնան սովորական ֆիզիկական հետազոտման մի մասը, ինչպես ռեֆլեկտոր մուրճիկը: Սարքերն օգնում են զարգացնել «մարմնի մաշկի տակ նայելու մեր կարողությունը», - ասել է նա: Բայց Ուոլահն ավելացրել է, որ ի տարբերություն իր գործընկերների՝ նա պատրաստ չէ ստետոսկոպը մեռած համարել: Նա պատկերացնում է բժիշկների հաջորդ սերնդին, ովքեր «ստետոսկոպ են կրում պարանոցին և ուլտրաձայն գրպանում»:

Ժամանակակից ստեղծագործողներն այնքան էլ նման չեն առաջին ստեղծագործողին, որը հայտնաբերվել է 1800-ական թվականների սկզբին ֆրանսիացի Ռենե Լենեքի կողմից, բայց դրանք, ըստ էության, նույն կերպ են աշխատում:

Ըստ ինտերնետի նյութերի

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Սույն թվականի հոկտեմբերի 4-ին տեղի ունեցավ Հայկական բժշկական ինստիտուտի գիտական խորհրդի հերթական նիստը:

Սույն թվականի հոկտեմբերի 4-ին տեղի ունեցավ Հայկական բժշկական ինստիտուտի գիտական խորհրդի հերթական նիստը:



Օրակարգի 1-ին հարցի շուրջ, որը վերաբերում էր վերաքննության 2-րդ շրջանի արդյունքների ամփոփմանը, խոսեց ՀԲԻ-ի ուսումնական գծով պրոռեկտոր Յ. Գ. Հարությունյանը: Նա համառոտ ներկայացնելով վերաքննության 2-րդ շրջանի արդյունքները, հավելեց նաև, որ ՀԲԻ-ում լինելու է վերաքննությունների 2 շրջան: 2-րդ վերաքննությունից հետո անհրաժեշտ գիտելիքների նվազագույն շեմը չհաղթահարած ուսանողներին տրվելու է ևս մեկ հնարավորություն «Բաց դռների օրվա» շրջանակում: Այն ուսանողները, ովքեր այս փուլում էլ բավարար գիտելիքներ չեն ցուցաբերի, կամ կհեռացվեն բուհից, կամ կկրկնեն կուրսը:

Օրակարգի 2-րդ հարցն էր՝ ատեստավորում, վերապատրաստում, որի շուրջ խոսեց դասախոս Ս. Պողոսյանը: Նա հանգամանակից ներկայացրեց դասախոսների ատեստավորման գործընթացը, որը 3-5 տարին մեկ անգամ կազմակերպվելու է ատեստավորման հանձնաժողովի կողմից: Այս նա դասախոսներին առաջարկեց վերապատրաստումների, հրապարակված աշխատանքների, գիտաժողովների մասնակցության մասին վկայող հավաստագրերը կցել անձնական գործերին և ընդհանրապես իրենց մասնագիտական առաջընթացի հետ կապված տեղեկատվությամբ կիսվել բուհի համապատասխան օղակների հետ:


Օրակարգի 3-րդ հարցի շուրջ խոսեց դասախոս Ա. Գ. Հարությունյանը: Նա ներկայացրեց ցածր կուրսերի կուրսատորներին, հավելելով, որ տարիներ առաջ, ՀԲԻ-ում կիրառված փորձը դրական արդյունք էր տվել և ներկայումս դարձյալ կարիք կա ցածր կուրսերի խմբերին կցել կուրսատորներ, ովքեր ամրապնդելով բուհ-ծնող կապը, կնպաստեն ուսանողների առաջադիմության բարձրացմանը և բացակայությունների նվազմանը:

Օրակարգի 4-րդ հարցը վերաբերում էր չափորոշիչների պատասխանատուների ներկայացմանը: Այս հարցի մասին հանգամանալից խոսեց ՀԲԻ-ի ՈԱԿ-ի ղեկավար Ա. Է. Անդրեասյանը:

Օրակարգի 5-րդ հարցի շրջանակում դասախոս Գ. Տ. Արզումանյանը ներկայացրեց իր կողմից պատրաստած «Դասավանդման մեթոդներ», իսկ դասախոս Ա. Գ. Հարությունյանը իր կողմից պատրաստած «Գնահատման մեթոդներ» մեթոդական ցուցումները:

Գիտխորհրդի օրակարգի 6-րդ հարցի շուրջ հանդես եկավ ՀԲԻ-ի գիտական գծով պրոռեկտոր, բ.գ.դ., պրոֆեսոր Հ. Գ. Վահրադյանը: Նա ներկայացրեց գիտական խորհրդին կից ստեղծված հանձնաժողովները և դրանց պատասխանատուներին`

1. Կանոնակարգային համակարգման և կառուցվածքային փոփոխությունների - Հարությունյան Ա. Գ., Եղիազարյան Ն. Վ.
2. Կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական աշխատանքների - Միրզոյան Ի. Ա., Հարությունյան Յ. Գ.
3. Միջազգային համագործակցության և արտաքին կապերի - Ավետիսյան Ա. Ռ., Վահրադյան Հ. Գ., Պողոսյան Ս. Ա.



4. Ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման - Անդրիասյան Լ. Հ., Անդրիասյան Ա. Է.
5. Պատվավոր կոչումների, պարգևատրումների ներկայացման հարցերի - Կարապետյան Գ. Ս., Պարոնիկյան Ռ. Գ.:

Մի քանի հարց ու պատասխանից հետո գիտխորհրդի նիստն ավարտվեց:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Մինչ օրս աշխարհի ամենաարագ ձուկը համարվում է առագաստ ձուկը: ԱՄՆ-ի Ֆլորիդա նահանգում անցկացված հետազոտության արդյունքում պարզվել է, որ այս ձկները 3 վայրկյանում 91մ են լողացել:

Աշխարհի ամենամեծ ձուկը կետ-շնաձուկն է: Այս ձկները հանդիպում են Խաղաղ, Հնդկական և Ատլանտյան օվկիանոսներում: Այս կենդանիներն ունեն 12,65մ երկարություն:

Ամենավտանգավոր ձկնատեսակ են համարվում պիրանիաները: Այս ձկները հանդիպում են Հարավային Ամերիկայում: Նրանք հարձակվում են ցանկացած կենդանու վրա անկախ չափից:

Բասոգիգաս տեսակի ձկներն ամենախորը սուզվող ձկներն են: Նրանք սուզվում են 8000մ:

Ձուկ, որը կարողանում է ծառ բարձրանալ: Հարավային Ասիայում են ապրում Անաբաս տեսակի ձկները: Այս ձկները ոչ միայն կարողանում են բարձրանալ ծառի վրա, այլ նաև կարողանում են հողի վրա տեղաշարժվել: Այս ձկները շնչում են ինչպես ջրի մեջ, այնպես էլ ցամաքում:

Ձկներն ունեն առանձնահատուկ զգայարան, որը կոչվում է կողմնային գիծ, որը աշխատում է ինչպես նավիգատորը և օգնում է ձկներին լողալ մութ և պղտոր վայրերում:

Որոշ ձկատեսակների կմախքը կազմված է միայն աճառներից:

Ձկները զգում են ցավ և տառապում են սթրեսից, ինչպես կաթնասունները և թռչունները:

Ձկները ունեն շատ լավ տեսողության, շոշափելիքի, համի զգայարաններ, ինչպես նաև լավ հոտի և լսողության զգայարաններ:

Երկրի վրա հայտնաբերվել է մոտավորապես 25.000 ձկան տեսակ:

Կարծիք կա, որ շուրջ 15.000 ձկնատեսակ դեռ հայտնաբերված չէ:

Գոյություն ունի ձկան ավելի շատ տեսակ, քան երկկենցաղների, սողունների, թռչունների և կենդանիների տեսակները միասին:

Բոլոր ձկների 40%-ը բնակվում են քաղցրահամ ջրերում: Ընդ որում ջրերի 0.1%-ն է քաղցրահամ:

Ձկները երկրի վրա ապրում են ավելի քան 450 միլիոն տարի:

Ձկները հաստատվել են Երկիր մոլորակի վրա ավելի շուտ, քան դինոզավրերը:

Արևադարձային ձկները ամենատարածված տնային կենդանիներից են ԱՄՆ-ում:

Արևադարձային ձկների 95%-ը մահանում են անբարենպաստ պայմաններից և սննդից:

ԱՄՆ-ում վաճառվող շատ արևադարձային ձկներ բերվել են Աֆրիկայից, Ասիայից, Կենտրոնական և Հարավային Ամերիկաներից:

ԳԻՏԵՔ, ՈՐ

Կանանց և թռչունների «կապը»

Քորնելի համալսարանի նեյրոկենսաբանության և վարքաբանության բաժնում աշխատող, թռչունների ամուսնական վարքագծի ուսումնասիրությամբ զբաղվող Ք. Մաք Գրոուն ուսումնասիրել է ամուսնական հայտարարություններում զուգընկերոջ նկատմամբ կանանց պահանջները: Նա վերլուծել է ամուսնական հայտարարություններն ու եզրակացրել, որ խոշոր քաղաքների (Ման ֆրանցիսկո, Բոստոն, Լոս Անջելես, Չիկագո, Մայամի) բնակչուհիների և «գավառական կանանց» (Մենթ Լյուիս, Կանզաս-սիթի, Նոր օռլեան, Մոնթգոմերի, Ալաբամա) պահանջները խիստ տարբեր են: Առաջինները կարևորում են նյութականը, երկրորդները՝ «հոգեկան որակները», «հասկանալու ընդունակությունը» և «հուզականությունը»:

Մաք Գրոուի կարծիքով այս մարտավարությունը շատ նման է թռչունների աշխարհում նմանատիպ գործընթացներին. խիտ բնակեցված թռչնազատություններում էգերն ընտրում են այնպիսի արուի, որը ի գորու կլինի կերակրել ապագա սերնդին. չոր գործնականություն՝ հանուն գոյատևման: Որքան բարդ են գոյատևման պայմանները, այնքան «կայուն» պետք է լինի արուն: Հետաքրքիր է նաև, որ հայտարարություններում նյութական կայունության պահանջները կանայք հաճախ քողարկում են «մասնագիտական» և

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ



ԷԼԵՈՆՈՐԱ ԼԵՎՈՆԻ ԲԱԲԱԼՅԱՆ-85

Լրացավ Հայկական բժշկական ինստիտուտի ներքին հիվանդությունների ամբիոնի դասախոս, բ.գ.թ., դոցենտ Էլեոնորա Լևոնի Բաբայանի ծննդյան հոբելյանական տարելիցը: Հայկական բժշկական ինստիտուտի ռեկտորատը, պրոֆեսորա-դասախոսական կազմը, ուսանողները և տարբեր տարիների նրա սաները շնորհավորում են սիրելի հոբելյարին և մաղթում քաջատողջություն, երջանիկ երկարակեցություն; Թող Աստծո կամոք նա դեռ երկար տարիներ մնա մեր կողքին, իր սաներին սովորեցնելով բարություն, մարդասիրություն, հանդուրժողականություն:

Ցանկանալով շարունակել ծնողների գործը, Էլեոնորա Լևոնի Բաբայանն ընտրեց բժշկի մասնագիտությունը:

Մի քանի տարի 6-րդ բուժմիավորումում որպես թերապևտ աշխատելուց հետո տեղափոխվեց Երևանի բժիշկների կատարելագործման ինստիտուտ և անձնուրաց նվիրվեց նաև մանկավարժական գործին:

Հայաստանի ու ՆԽՍՀՄ-ի տարբեր քաղաքներից Երևան վերապատրաստման եկած բազմաթիվ սերունդներ են նրա հետ շփվել, նրա փորձով հարստանալու առիթն ունեցել ու բաժանվել միմիայն դրական տպավորություններով:

Մի քանի տասնամյակ է, ինչ Էլեոնորա Լևոնովնան իր փորձն ու գիտելիքներն է փոխանցում նաև Հայկական բժշկական ինստիտուտի ուսանողներին, դասավանդելով սրտաբանություն, թոքաբանություն: Մակայն նրա կարծիքով, կարևոր է նաև ուսանողների շրջանում մարդկային բարձր արժեքների սերմանումը: «Գիտելիքի պակասը կարելի է լրացնել կարդալով, դասախոսի խնդիրն է բժիշկ-մտավորականին հղկել դեռ ուսանողական նստարանից»- այս համոզումն ունի սիրված դասախոսը: Ու այս համոզմամբ նա բազմաթիվ սերունդներ է ճանապարհել դեպի բժշկագիտության բնագավառ: Սերունդներ, որոնք երախտագիտությամբ ու մեծ սիրով են հիշում իրենց ուսուցչին ու նրա խորհուրդները:

ԾՈՎԻՆԱՐ ԻՇԽԱՆԻ ԱՂԱՄՅԱՆ-80



2019-ը հոբելյանական է նաև Հայկական բժշկական ինստիտուտի մարդու նորմալ ֆիզիոլոգիայի ամբիոնի դասախոս, կ.գ.թ., դոցենտ Ծովինար Իշխանի Աղամյանի համար: Լրացավ նրա ծննդյան 80-ամյակը:

Հայկական բժշկական ինստիտուտի ռեկտորատը, պրոֆեսորա-դասախոսական կազմը, ուսանողները և շրջանավարտները սրտանց շնորհավորում են սիրելի հոբելյարին և մաղթում քաջառողջություն, կենսուրախություն և երկար-երկար տարիների կյանք:

Ծովինար Իշխանովնան Հայկական բժշկական ինստիտուտի այն դասախոսներից է, ով այստեղ է աշխատում բուհի հիմնադրման ժամանակվանից: Երևանի պետական համալսարանում տասնամյակների աշխատանքային փորձ և հմտություն ունեցող դասախոսը կարճ ժամանակում ՀԲԻ-ում ևս արժանացավ գործընկերների, ուսանողների և բուհի ղեկավարության հարգանքին, վստահությանն ու սիրուն: Դասավանդման գործընթացում նա կարողացավ կիրառել այնպիսի մեթոդաբանություն, որը ոչ միայն պարզ ու դյուրըմբռնելի կղարձներ մարդու նորմալ ֆիզիոլոգիա առարկայի յուրացումը, այլ հետաքրքրություն կառաջացներ ապագա բժիշկների շրջանում: Թերևս սա է պատճառներից մեկը, որ Ծովինար Իշխանովնայի մասին հարգանքով ու ջերմությամբ են խոսում և ներկայումս ՀԲԻ-ում սովորողները, և նրանք, ովքեր այսօր կայացած բժիշկներ են և ժամանակին աշակերտել են նրան:

Իսկ ինքը, սիրված դասախոսը չի սիրում խոսել իր մասին, համարելով, որ անում է իր աշխատանքը՝ գիտելիք փոխանցել իր սաներին և հնարավորինս անել այնպես, որ ուսման հանդեպ սեր ու հետաքրքրություն առաջացնի բոլոր ուսանողների շրջանում: Ծովինար Իշխանովնան կարևորում է նաև ուսանողների շրջանում գիտության հանդեպ հետաքրքրության սերմանումը: Ահա թե ինչու ամեն անգամ ՀԲԻ-ում ուսանողական գիտաժողով կազմակերպելիս նա պատրաստակամորեն օգնում է բոլոր նրանց, ովքեր այս բնագավառում իրենց առաջին փորձերն են անում:

ՆՈՐԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ_2019



2019թ. ֆիզիոլոգիայի և բժշկության Նոբելյան մրցանակը շնորհել են Ուիլյամ Քելինին, Պիտեր Ռեթքլիֆին և Գրեգ Սեմենցային այն հայտնագործության համար, որ բջիջներն ընտելանում են թթվածնի անբավարարությանը:

Այս տարվա նոբելյան դափնեկիրների արգասաբեր հայտնագործությունները պարզել են կյանքի համար առավել կարևոր ադապտիվ պրոցեսներից մեկի մեխանիզմը: Նրանք մեր հասկացողության համար դրեցին այն բանի հիմքը, թե ինչպես է թթվածնի մակարդակը կարգավորում բջիջների նյութափոխանակությունը և ֆիզիոլոգիական ֆունկցիաները: Դրանից բացի, նրանց հայտնագործությունը ճանապարհ է բացել անեմիայի, քաղցկեղի և այլ շատ հիվանդությունների դեմ պայքարի նոր ռազմավարություններ ստեղծելու համար»,- նշված է կոմիտեի պաշտոնական մամուլի հաղորդագրության մեջ:

Սկզբունքորեն թթվածինն անչափ կարևոր է ինչպես կյանքի համար, այնպես էլ բջիջների գործելու: Էվոլյուցիայի ընթացքում մարդու օրգանիզմը մի շարք մեխանիզմներ է մշակել: Թթվածնի մակարդակից են կախված շնչառությունը, նյութափոխանակությունը, սաղմնային զարգացումը և իմունային համակարգի ռեակցիան՝ վարակների և այլ «նվաճողների» հանդեպ:

Հիպոքսիային ռեակցիայի համար մարդու օրգանիզմում պատասխանատու է մասնավորապես, էրիթրոպոետին հորմոնը: Այս հորմոնը որքան շատ է, այնքան արյան մեջ էրիթրոցիտներ շատ են ստեղծվում: Այն, որ այս մեխանիզմը կարևոր է, գիտնականները գիտեին դեռևս XX դարակեսին, բայց թե ինչպես է այն աշխատում՝ անհայտ էր: Հենց սրանով են զբաղվել երեք դափնեկիրներից երկուսը՝ Գրեգ Սեմենցան և Պիտեր Ռեթքլիֆը: Նրանք իրարից անկախ ուսումնասիրել են գեներ, որոնք էրիթրոպոետինի աշխատանքը կարգավորում են կախված թթվածնի քանակությունից: Իրենց հետազոտությունների ժամանակ գիտնականները հայտնաբերել են HIF-1 սպիտակուցը, որն ակտիվանում է միայն թթվածնի անբավարարության դեպքում և քաղցկեղային բջիջներին թույլ է տալիս ադապտացվել այդպիսի պայմաններին: Դրանից բացի, նրանք հայտնաբերել են, որ թթվածնի ընկալման մեխանիզմն առկա է գործնականում բոլոր հյուսվածքներում:

Գրեթե նույն ժամանակ մյուս դափնեկիրը՝ ուռուցքաբան Ուիլյամ Քելինը, ուսումնասիրել է, թե ինչպես է զարգանում հազվագյուտ գենետիկ հիվանդություն Հիպպել-Լանդաուի հիվանդությունը: Նա ուշադրություն է դարձրել, որ այս հիվանդության ժամանակ

առաջացած ուռուցքներն այնպես են զարգանում՝ ասես թթվածնի ավելցուկ են ստանում: Ավելի ուշ նա հայտնաբերել է, որ այս հիվանդության դեմ գործող գենը կապված է HIF-1 սպիտակուցի հետ: Այդպիսով, դափնեկիրների բացահայտումները թույլ են տվել տեղեկանալ, թե ինչպես է մարդկային օրգանիզմն արձագանքում հասանելի թթվածնի պակասին կամ ավելցուկին: Դա կարևոր է անեմիայի, քաղցկեղի, ինսուլտի և ինֆարկտի բուժման ժամանակ:

Սըր Փիթեր Ռեթքլիֆը բրիտանացի բժիշկ և մոլեկուլային կենսաբան է, ծնվել է 1954թ. Լանքաշիրում: Նա Թագավորական հասարակության անդամ է, դեկավար պաշտոններ է զբաղեցնում Նաֆիլդի Օքսֆորդի համալսարանում և Լոնդոնի Ֆրենսիս Քրիքի ինստիտուտում: Ռեթքլիֆը Քեմբրիջի համալսարանում բժշկություն է ուսանել, և 1989-ին երիթրոպոեզիսի ուսումնասիրության համար լաբորատորիա է բացել:

Ուիլյամ Քելին կրտսերը Հարվարդի համալսարանի պրոֆեսոր է, ծնվել է 1957-ին Նյու Յորքում: 2008-ին դարձել է Դանաֆարբերի անվան օնկոլոգիական ինստիտուտի տնօրենի տեղակալը: Այնտեղ ուսումնասիրել է՝ ինչպես են ուռուցքների ճնշող գեներում մուտացիաներն ազդում քաղցկեղային տարբեր հիվանդությունների վրա: Բացի այդ, Քելինը քաղցկեղի դեմ պայքարող մի շարք բարեգործական կազմակերպությունների անդամ է: Նրա առանձին աշխատանքներ նվիրված են երեխաների մոտ աչքի ցանցաթաղանթի ուռուցքներին և Հիպպել-Լինդաու հիվանդությանը:

Բժիշկ Գրեգ Սեմենցան ծնվել է 1956-ին Նյու Յորքում, ավարտել է Հարվարդի(1978-ին) և Փենսիլվանիայի համալսարանները (1984-ին): Այժմ Սեմենցան աշխատում է ԱՄՆ-ի Ջոն Հոփքինսի անվան համալսարանում, զբաղվում է մանկաբուժությամբ, կենսաքիմիայով և օնկոլոգիայով: Բժշկության աշխարհում 63-ամյա Սեմենցային ճանաչում բերեց HIF-1-ի բացահայտումը, որը քաղցկեղային բջիջներին թույլ է տալիս հարմարվել ցածր թթվածնային պարունակությամբ միջավայրին:

ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ



Հայկական բժշկական ինստիտուտի ստոմատոլոգիական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Կարեն Անտոնյանը Պրահայում կայացած շինկիոկուշին կարատեի Եվրոպայի առաջնությունում դարձել է փոխչեմպիոն: Սրտանց շնորհավորում ենք Կարենին և մաղթում նորանոր հաղթանակներ:

-Կարեն, ինչպե՞ս սկսեցիր քո առաջին քայլերը սպորտի բնագավառում և ինչո՞վ քեզ գրավեց շինկիոկուշին կարատեն:

-Երբ իմ ծննդավայրում՝ Ախալքալակի Խուլգոմո գյուղում բարերարների ջանքերով բացվեց մարզադպրոց, ես մեծ սիրով սկսեցի հաճախել այնտեղ: Քանի որ փոքրուց տպավորվել էի Ջեկի Չանի ֆիլմերից և սիրահարվել մարտարվեստին, ընտրեցի կարատեն: Իմ առաջին մարզիչը Պողոս Չիվչյանն էր: Որպես գյուղի մարզադպրոցի սան մասնակցել եմ բազմաթիվ մրցումների և ունեցել շատ հաջողություններ: 2016թ. տեղափոխվեցի Երևան և ընդունվեցի հենակետային բժշկական քոլեջի դեղագործական բաժինը: Շուրջ 2 տարի սպորտով չզբաղվելուց հետո հասկացա, որ շինկիոկուշին կարատեն ոչ միայն մարզաձև է, այլ դարձել է կյանքիս իմաստը: Ու սկսեցի ավելի լուրջ զբաղվել այս մարզաձևով: Հիմա մարզվում եմ հավաքականի գլխավոր մարզիչ Քսպոյան Արմենի և շինկիոկուշին կարատեի Հայաստանի ներկայացուցիչ Քսպոյան Սուրադի մոտ:

-Ինչպե՞ս ստացվեց, որ սիրահարված լինելով կարատեին, ուսումը շարունակեցիր բժշկական քոլեջում և այժմ էլ սովորում ես բժշկական բուհում:

-Բժշկական ուղղությունն ընտրեցի մի քանի պատճառներով: Նախ շատ էի սիրում քիմիա և ֆիզիկա առարկաները: Ազդեցություն ունեցավ նաև եղբորս՝ Երևանի պետական բժշկական համալսարանում սովորելու փաստը: Եվ վերջապես, մտածում էի ունենալ մասնագիտություն, որը հնարավոր կլիներ համատեղել կարատեի հետ:

-Նշեցիր, որ շինկիոկուշին կարատեն քո կյանքի իմաստն է: Մանրամասնիր, խնդրեմ, ի՞նչ է տվել այս սպորտաձևը քեզ:

-Արևելյան մարտարվեստը ոչ միայն ֆիզիկական հասկանիշներ է զարգացնում, այլ յուրահատուկ հոգեբանություն ու մտածելակերպ է ձևավորում մարդու մեջ: Օրինակ, մինչ այս սպորտաձևով զբաղվելը ես գոռոզ էի, մեծամիտ, տաքարյուն, ամենափոքր բաներից կարող էի կռիվներ սարքել... Հիմա ավելի հավասարակշռված եմ, համեստ, պատրաստ եմ լսել դիմացինի խորհուրդը անկախ նրա տարիքից, ավելի կարգապահ եմ, ունեմ օրվա հստակ ռեժիմ, որին խստորեն հետևում եմ:

-Ինչպե՞ս ես կարողանում համատեղել կարատեի պարապմունքներդ ու դասերդ ՀԲԻ-ում:



-Ինձ օգնում է օրվա ռեժիմիս հետևելը: Անկեղծ լինելով ասեմ, որ մրցումներից առաջ, երբ ավելի ինտենսիվորեն եմ պարապում, դասերս ինչ-որ չափով չեմ հասցնում: Սակայն մրցումներն ավարտելուց հետո փորձում եմ լրացնել բոլոր բացթողումներս:

-Կարեն, երբ Պրահայում կայացած շինկիոկուշին կարատեի Եվրոպայի առաջնությունում դու դարձար փոխչեմպիոն, ի՞նչ զգացումներ ունեցար:

-Աննկարագրելի է այն զգացումը, որ ունեցա այդ պահին: Դա և հպարտություն է, և տարիների ներդրած ջանքերիդ արդյունքը գնահատված տեսնելու հոգեվիճակ: Սակայն կարևոր է, որ չկորցնես այն գիտակցումը, որ սպորտում մի օր կարող ես բարձրանալ, մի օր էլ ընկնել:

-Իսկ պարտվելիս ի՞նչ զգացում ես ունենում:

-Ամենակարևորը՝ չեմ հիասթափվում: Փորձում եմ վերլուծել, հասկանալ ու գիտակցել իմ սխալը: Երբեմն նաև ինքս ինձ պատժում եմ:

-Ինչպե՞ս:

-Ինքս ինձ զրկում, արգելում եմ զբաղվել, օրինակ համակարգչով (որով, ի դեպ շատ եմ սիրում զբաղվել) կամ հեռախոսով: Եվ նմանատիպ այլ բաներ...

-Ինչպե՞ս ես պատկերացնում քո ապագան:

-Կգրադվեմ կարատեով և ստոմատոլոգիայով: Օրվա մի մասը կհատկացնեմ պարապմունքներին ու մարզական աշխատանքին, մյուս մասն էլ՝ իմ պացիենտներին:

-Զրույցի ավարտին ի՞նչ կուզես ավելացնել:

-Սիրելի ծնողներ, եթե ուզում եք, որ ձեր երեխան զբաղվի որևէ սպորտաձևով, ընտրեք այն, որը հաճելի է նրան: Իսկ ուսանողներին կուզեմ ասել՝ ունեցեք նպատակ և ձգտեք հասնել դրան: Դժվարություններից երբեք մի հիասթափվեք:

Զրուցեց Լուսինե Ոսկանյանը

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԲԻ-ՈՒՄ



Ուսանողական գիտական առաջին փորձարարական, ինչպես նաև ռեֆերատիվ աշխատանքների կատարումը նպաստում է ապագա բժշկի մոտ ստեղծագործական մտածողության ձևավորմանը և օգնում մշակելու այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են աշխատասիրությունը, միտքը անկաշկանդ ու հասանելի ձևով ներկայացնելու, հարցերին հստակ պատասխան տալու կարողությունը:

Հենց այս շեշտադրմամբ Հայկական բժշկական ինստիտուտում ստեղծվել և գործում է Ուսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ): Այն ունի իր կանոնակարգը, որը հաստատված է ՀԲԻ-ի գիտխորհրդի կողմից: Ըստ այդ կանոնակարգի, Ուսանողական գիտական ընկերությունը ՀԲԻ-ի ուսանողներին միավորող ընկերություն է: Իր նպատակների և խնդիրների իրականացման նպատակով համագործակցում է ՀԲԻ-ի գիտական խորհրդի, ուսումնավարչական խորհրդի և այլ մարմինների հետ:

Ընկերության գլխավոր նպատակն է նպաստել ՀԲԻ-ի ուսանողների գիտական, հետազոտական, ստեղծագործական գործունեությանը:

Ընկերության խնդիրներն են՝ կազմակերպել ուսանողական գիտաժողովներ, սեմինարներ, դասախոսություններ և այլ գիտակրթական ուղղվածություն ունեցող միջոցառումներ, աջակցել ուսանողների գիտահետազոտական գործունեությանը, համագործակցել այլ կրթական հաստատությունների ուսանողական գիտական ընկերությունների և այլ գիտակրթական կենտրոնների ու կազմակերպությունների հետ:

2019թ. ապրիլի 28-ին տեղի է ունեցել 9-րդ միջբուհական ուսանողական գիտաժողով, նվիրված ՀԲԻ-ի վիրաբուժության ամբիոնի վարիչ Հրանտ Մեսրոպի Անդրեասյանի հիշատակին: Գիտաժողովին մասնակցել են նաև ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության, բիոտեխնոլոգիայի դասախոսներ և ուսանողներ, ներկայացնելով բացառապես փորձարարական բնույթի աշխատանքներ:

Ուսանողական գիտական ընկերությունը պատրաստվում է կազմակերպել ուսանողական գիտական կոնֆերանս «Աուտոիմուն հիվանդություններ» թեմայով:

Համագործակցելով ՀԲԻ-ի ուսանողական խորհրդի հետ, պատրաստվում է 2020թ. մայիսին անցկացնել միջազգային գիտաժողով, ընդգրկելով նաև մեր բուհում ուսում ստացող արտասահմանցի ուսանողներին:

ՀԲԻ-ի Ուսանողական գիտական ընկերությունը նախատեսել է պատրաստել բժշկության արդի հարցերին վերաբերող բժշկական տեսահոլովակներ, համագործակցելով «Էրեբունի» ԲԿ-ի բուժանձնակազմի հետ:

Արյան խումբը և բնավորությունը

Ըստ ճապոնացիների, արյան խումբը մեծ չափով որոշում է մարդու բնավորությունը: Այն ազդեցություն է թողնում նաև առողջության վրա:

Տրանսիացի հոգեբան Ժան Բատիստ Դելակուրը այն կարծիքին է, որ արյան խումբը ազդում է բնավորության վրա: **Արյան 1-ին** խումբ ունեցող մարդիկ գործունյա են, պահանջկոտ թե իրենց, թե ուրիշների նկատմամբ: Նրանք նաև առողջ են ու երկարակյաց: **2-րդ խմբի արյուն** ունեցողները ավելի շատ են ենթակա քաղաքակրթության հիվանդություններին՝ սրտամկանի ինֆարկտ, աթերոսկլերոզ, շաքարային դիաբետ, ուռուցքներ: Նրանք օժտված են բարձր ինտելեկտով, կարեկից են և աշխատունակ նույնիսկ ուժեղ սթրեսների դեպքում: Նաև պարտաճանաչ են, աշխատասեր, կարգապահ: Հավատարիմ են ընկերներին, հարազատներին, սիրած էակին: **3-րդ խմբի արյուն** ունեցողները զգայուն են, օժտված, հուսալի ընկեր: Աշխատանքի մեջ իրենց և ուրիշների նկատմամբ պահանջկոտ են: Այս խմբի արյուն ունեցող կանայք խանդոտ են: Ճապոնիայում ամուսնության միջնորդ գրասենյակները դժվարանում են նրանց համար ամուսին ընտրել, որովհետև չափազանց ինքնուրույն են, զվարթ, փոփոխամիտ: **4-րդ խմբի արյուն** ունեցողները զգացմունքների և կրքերի գերին են: Նրանք նաև ինքնամփոփ են, ոչ ոքի չեն խոստովանում իրենց տառապանքները: Միրո, ընկերության, ընտանիքի հարցում գրեթե կատարյալ են, ձգտում են երջանկացնել իրենց ընտրյալին:

Մեր գերազանցիկները

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Տաթևիկ Մարտիրոսյանը սովորում է Հայկական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետի 2-րդ կուրսում: Նա այն ուսանողներից է, ով սովորում է անվճար: Ընդունելության ժամանակ միասնական քննությունների արդյունքում քիմիայից և կենսաբանությունից հավաքելով 32 նիշից ավելի, Տաթևիկը վաստակեց անվճար սովորելու հնարավորություն:

«Ինքս լինելով Շիրակի մարզի Սարալանջ գյուղից, Հայկական բժշկական ինստիտուտի մասին տեղեկացա Տաթևիկ Ոսկանյանից, ով ևս սովորում է ՀԲԻ-ում և մեր հարևան Արևշատ գյուղից է», - պատմում է Տաթևիկը:

Գերազանցությամբ ավարտելով ուսումնառության 1-ին տարին, Տաթևիկը բարձր առաջադիմությամբ շարունակում է ուսումը 2-րդ կուրսում: «Ուրախ եմ, որ սովորում եմ ՀԲԻ-ում: Շատ գոհ եմ մեր դասախոսներից, ովքեր ամեն հնարավորն անում են, որ մենք լավ սովորենք: Խմբի հարցում ևս բախտս բերել է: 1-ին կուրսում ստացվել էր այնպես, որ տարբեր նախասիրություններ և ուսման հանդեպ մեծ սեր ունեցող երիտասարդներով հայտնվել էինք մի խմբում: Շատ հետաքրքիր էր անցնում մեր առօրյան: Ընկեր Քոշատաշյանի հետ հետաքրքիր միջոցառում կազմակերպեցինք, որը դուր եկավ շատերին:

Այս տարի փոքր-ինչ փոխվել է խմբի կազմը, սակայն դարձյալ գերակշռում է ջերմ ու անկաշկանդ շփումը: Պատրաստ ենք միմյանց օգնել: Հախաճ դասերից առաջ կամ հետո մնում ենք ու միմյանց օգնելով պարապում անատոմիա կամ այլ առարկա», - հավելում է Տաթևիկը:

Տաթևիկի համար գերազանց սովորելը կարևոր է ոչ միայն ուսումն անվճար շարունակելու համար: «Իմ կարծիքով բժիշկը պիտի շատ գրագետ, բանիմաց ու մարդկային լինի: Նա սխալվելու իրավունք չունի», - այս կարծիքին է նա:

Բժշկության հանդեպ Տաթևիկի սերն ու հետաքրքրությունը ծնվել են դեռ փոքրուց, տեսնելով բուժքույր մայրիկի մոտեցումը հարևան-բարեկամին:

«Երբ ես ասացի, որ ցանկանում եմ բժիշկ դառնալ, ծնողներս ուրախությամբ ընդունեցին որոշումս, սակայն ասացին՝ լա՞վ ես մտածել, իմացիր բժշկությունը՝ խաղ ու պար չէ: Մայրս, որ Ղարաբաղյան կռիվների ժամանակ աշխատել է ճակատում, հորդորեց շատ լավ մտածել որոշում կայացնելուց առաջ», - պատմում է Տաթևիկը:

Այսօր Տաթևիկը դեռ հստակ չի որոշել, թե ինչ մասնագետ է դառնալու, սակայն նրա համար հստակ է մի բան՝ այդ մասնագետը լինելու է բանիմաց ու մարդկային և հիվանդների, և շրջապատի ու գործընկերների հետ շփումներում:

«Ներկայումս առավել հետաքրքրված եմ էնդոկրինոլոգիայով ու մտածում եմ էնդոկրինոլոգ դառնալու մասին: Սակայն ավելի բարձր կուրսերում ինչպես կփոխվի որոշումս, դեռ չգիտեմ», - նշում է նա:

Բուհում գերազանց սովորելուց զատ Տաթևիկը սիրում է զբաղվել լուսանկարչությամբ: «Լուսանկարչական ապարատով գեղեցիկ պահերն ու չկրկնվող ակնթարթները հավերժացնելն իմ նախասիրությունն է»:

Նա նաև ասումնքում է: Հասցրել է մասնակցել ասմունքի մրցույթների ու գրավել 2-րդ ու 3-րդ տեղեր:

«Ասմունքի հանդեպ սերս գալիս է հայրիկիցս: Ձմռան երեկոներին հաճախ էր նա հավաքում մեզ (ընտանիքում 3 երեխա ենք) ու ասումնքում մեզ համար: Նաև հորդորում էր շատ կարդալ, քանի որ տանը մեծ գրադարան ունենք», - պատմում է Տաթևիկը:

«Միշտ առաջ» նշանաբանը կյանքի ուղի ընտրած Տաթևիկ Մարտիրոսյանը մարդկանց մեջ գնահատում է հավատարմությունը, ճշտապահությունը, վստահությունը: Ու այն կարծիքին է, որ եթե միմյանց հետ փոխհարաբերություններում մարդիկ առաջնորդվեն այս արժեքներով, կյանքն ավելի գեղեցիկ կդառնա:

«Երբեմն մի ժպիտով, բարի խոսքով մարդուն ավելի շատ կարող ես օգնել, քան դեղամիջոցով, որը տալիս ես անտարբեր հայացքով: Կարծում եմ ապագայում ինձ կհաջողվի դառնալ այնպիսի բժիշկ, ինչպիսին երագում եմ այսօր», - իր խոսքն այսպես է ավարտում Տաթևիկը:

Լուսինե Ոսկանյան

ՄԵՐ ԷՔՍԿՈՒՐՄԻՍ



Վերջերս մեր խմբով էքսկուրսիա կազմակեպեցինք դեպի Դիլիջան, Հաղարծնի վանք և Պարզ լիճ:

Էքսկուրսիայի գաղափարը ծնվեց հանկարծակի և հեղինակը մեր խմբի սղաներից մեկն էր՝ Նարեկը: Հրավիրեցինք կենսաքիմիայի դասախոս Հասմիկ Սուրենովնային և հոգեբանության դասախոս Արմեն Ռոբերտովիչին: Ողջ ճանապարհին ուրախ տրամադրությամբ, կատակներ անելով չնկատեցինք, թե ինչպես հասանք Պարզ լիճ: Աննկարագրելի գեղեցիկ է աշունն այստեղ: Գույների խաղ, որ աչք է շոյում և հետաքրքիր տրամադրություն ստեղծում: Եվ մենք բնության գրկում հետաքրքիր օր անցկացրեցինք:

Աշնան գույները վայելելուց զատ այստեղ տարբեր խաղեր խաղացինք: Ի դեպ, բոլորիս համար անսպասելի բացահայտեցինք, որ մենք՝ աղջիկներս, կարողանում ենք շատ լավ կրակել:

Ուրախ տրամադրությամբ մեր էքսկուրսիան շարունակեցինք դեպի Հաղարծին: Տպավորություններն ուղղակի աննկարագրելի էին: Հաղարծնի վանքային համալիրը բնության և ճարտարապետության մի սքանչելի ներդաշնակություն է: Այստեղ մենք փորձեցինք հիշել այն ամենը, ինչ կապված էր այս վանքային համալիրի անվան ու նրա պատմության հետ:

Հիշեցինք Հաղարծին անվան հետ կապված ավանդապատումը, ըստ որի այս վանքի հանդիսավոր օժման ժամանակ հոգևոր դասից ներկա 2 եպիսկոպոս նկատում են, որ սուրբ հոգին արծվի տեսքով վայր է իջնում վանքի վրա: Նրանք մյուսներին ի տես մատնացույց են անում գմբեթի շուրջ խայտացող թռչնին ասելով՝ խաղ արծվի,

խաղ արծվի: Ասում են, որ այդ օրվանից վանքը կոչել են խաղ արծվի, որն էլ հետագայում վերափոխվել և դարձել է Հաղարծին:

Հաղարծին վանքային համալիրը կազմավորվել է տարբեր ժամանակներում կառուցված շենքերից, նրա կազմում են 3 եկեղեցի, 2 գավիթ, սեղանատունը, մի քանի աղոթարաններ, խաչքարեր և այլն: Ամենահինը՝ Ս. Գրիգոր եկեղեցին կառուցվել է 10-11-րդ դարերում: Ս. Գրիգորին արևմուտքից կից է 4 սյուներով մեծ գավիթը, որը 12-րդ դարի վերջին կառուցել է Իվանե Զաքարյանը: Ս. Գրիգորին արևելյան մասում շատ մոտ կանգնած է կապտավուն բազալտից 1244թ. կառուցված Ս. Ստեփանոս գմբեթավոր եկեղեցին:

Գլխավոր եկեղեցին՝ Ս. Աստվածածինը, գմբեթավոր դահլիճ է: Համաձայն արձանագրության, կառուցվել է 1281թ., սակայն կան ենթադրություններ, որ 1281-ին կառույցը որոշ փոփոխություններով վերականգնվել է, հիմնարկված լինելով 10-11-րդ դարերում: Արևմտյան մասում է սեղանատունը, որն ըստ առկա արձանագրության, կառուցվել է 1248թ.: Հայաստանում նմանօրինակ 2 պահպանված կառույցներից մեկն է (մյուսը Հաղպատում է):



Արևմտյան երդիկի հյուսիս-արևելյան անկյունում արձանագրված է «Մինաս», իսկ որմնաքարին բազմիցս հանդիպող «Ս» տառը հավանաբար կառուցող ճարտարապետի անունն է: Հաղարծինի սեղանատունը ճարտարագիտական լուծումով և գեղարվեստով հայկական ճարտարապետության լավագույն նմուշներից է:

Հաղարծին վանական համալիրի կառույցներով հիանալուց և հետաքրքիր ժամանակ անցկացնելուց հետո բռնեցինք էտդարձի ճանապարհը դեպի Երևան:

Արդեն հոգնել էինք, սակայն դա էլ չէր խանգարում մեզ վայելել հրաշք օրը: Էքսկուրսիան ոչ միայն մեզ պարզևեց հրաշալի մի օր, այլ մեզ ավելի մտերմացրեց: Տուն վերադարձանք գոհ ու բարձր տրամադրությամբ:



201 խմբի անունից

Տաթևիկ Մարտիրոսյան

Մեր շրջանավարտները



ՍՈՒՍԱՆՆԱ ՌՈՍՏՈՍՅԱՆ

2006-2011թթ. սովորել է Հայկական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետի բակալավրիատում, 2011-2013թթ.՝ մագիստրատուրայում: 2013-2016թթ. անցել է կլինիկական օրդինատուրա «քիթ-կոկորդ-ականջաբանություն» մասնագիտությամբ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում: Շուրջ 1 տարի աշխատել է <Նյումեդ> բժշկական կենտրոնում, որպես քիթ-կոկորդ-ականջաբան: Ներկայումս աշխատում է Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոնում, որպես քիթ-կոկորդ-ականջաբան:

-Սուսաննա, ինչպե՞ս ստացվեց, որ դպրոցն ավարտելուց հետո դիմեցիր Հայկական բժշկական ինստիտուտ:

-Մեծացած լինելով բժիշկների շրջապատում, դեռ փոքրուց վիրաբույժ դառնալը եղել է իմ երազանքը: Դպրոցն ավարտելու շրջանը համընկավ մի իրողության, երբ հանգամանքների բերումով հանդիպեցի իրենց գործի գիտակ բժիշկների, ովքեր ՀԲԻ-ի շրջանավարտներ էին և մոտիկից ծանոթ այս բուհի որակին: Այլևս որոշումը կայացված էր: Ավելին, իմ ընդունվելուց 2 տարի անց ՀԲԻ-ի ուսանող դարձավ քույրիկս՝ Դիանան:

-Ինչպե՞ս ծնվեց սերը քիթ-կոկորդ-ականջաբանության հանդեպ և ի՞նչը նպաստեց որոշմանդ փոփոխմանը:

-1-ին կուրսից սկսած հերթապահում էի վիրաբուժական բաժանմունքներում, ակտիվորեն մասնակցում տարբեր բուժական գործողությունների՝ ներարկումներ, վիրակապություններ և այլն: Վիրաբուժությունից գատ ինձ այլ բնագավառում չէի պատկերացնում: Իսկ ակնաբուժության և քիթ-կոկորդ-ականջաբանության բնագավառում՝ ընդհանրապես: Սակայն, երբ Աշխեն Սերգեյնա Բալբաբյանի մոտ անցանք քիթ-կոկորդ-ականջաբանություն, նա կարողացավ այնպիսի հետաքրքրություն արթնացնել ինձ մոտ, որ քիթ-կոկորդ-ականջաբանությունը դարձավ իմ մասնագիտական ուղին: Ես հասկացա, որ նա բժշկի այն տեսակն է, որին

կուզեի նմանվել: Հրապուրանքս այս բնագավառի հանդեպ այնքան մեծացավ, որ մագիստրատուրայի ընթացքում, արձակուրդս անցկացնում էի քիթ-կոկորդ-ականջաբանության բաժանմունքում:

Վիրաբույժ դառնալու որոշումն փոխվեց, որովհետև հասկացա, որ Հայաստանում տարբեր կարծրատիպերի պատճառով չէի կարող ինքնադրսևորվել այնպես, ինչպես կուզենայի: Քիթ-կոկորդ-ականջաբանությունն ընտրեցի նաև այն պատճառով, որ այս բնագավառում կա և վիրաբուժություն, և թերապիա:

-Ո՞ւմ ես համարում քո ուսուցիչը այս բնագավառում:

-Ես բախտ ունեցա կլինիկական օրդինատուրան անցնել «Էրեբունի» ԲԿ-ի LOR բաժանմունքում և ունենալ Ա. Կ . Շուքուրյանի նման ուսուցիչ: Ես երախտապարտ եմ նրան և Աշխեն Սերգեյնային, ովքեր ամեն ինչ անում են, որ սովորել ցանկացող օրդինատորը դառնա մասնագետ: Շնորհակալ եմ նաև բաժանմունքի բոլոր բժիշկներին, ովքեր մեզ հետ քննարկել են հետաքրքիր դեպքերը և ստեղծել դրական մթնոլորտ սովորելու համար:

-Որպես երիտասարդ բժիշկ, ի՞նչ ես անում, որպեսզի ստացվի բժիշկ-պացիենտ շփումը:

-Դեռևս ուսանողական տարիներից հերթապահելով ստացիոնարներում և հետագայում էլ աշխատելով շտապ օգնությունում, ես հիվանդների հետ շփման մեծ դպրոց անցա: Հիվանդին պիտի մոտենալ ըմբռնումով և մարդկայնորեն, նրան բացատրել հիվանդության հետ կապված հարցերը առանց թերագնահատելու կամ գերագնահատելու իրավիճակը:

-Որպես նորավարտ բժիշկ ի՞նչ խնդիրների առնչվեցիր:

-Առաջին խնդիրը կապված է եղել բուհի հետ: Շատերը դեռ այն համոզմանն են, որ եթե մասնավոր բուհի շրջանավարտ ես, ուրեմն ինչ-որ բանով զիջում ես: Իհարկե, ժամանակի ընթացքում դա հարթվում է, քանի որ շփման ընթացքում նրանք փոխում են իրենց տեսակետները:

Երկրորդ խնդիրը՝ դա մեզանում արմատացած այն կարծրատիպն է, որ գերիշխում է անվստահությունը երիտասարդ բժիշկների հանդեպ:

-Ի՞նչն էս կարևորում բժիշկ-պացիենտ փոխհարաբերություններում:

-Վստահությունը: Եթե այն բացակայում է, բուժման արդյունքը գոհացուցիչ լինել չի կարող:

-Քո կարծիքով ի՞նչը քեզ օգնեց բժիշկ դառնալու ճանապարհին:

-Իմ պարտաճանաչ և լուրջ վերաբերմունքը ամեն հարցի: Նաև այն, որ իմ կյանքում, բարեբախտաբար, հանդիպել են լավ մարդիկ, ովքեր և մարդկային, և մասնագիտական տեսանկյունից ինձ շատ բան են տվել, ես էլ փորձել եմ վերցնել տրվածը:

-Ի՞նչ ցանկություններ ունես, և ի՞նչ կուզես ասել ՀԲԻ-ի ուսանողներին:

-Բոլորին մաղթում եմ առողջություն, քանի որ առողջ մարդն է, որ կարող է անել ամեն ինչ: Բոլորին մաղթում եմ նաև հաջողություն, իսկ դա նշանակում է՝ հայտնվել ճիշտ պահին, ճիշտ տեղում:

Ուսանողներին ուզում եմ ասել՝ լավ սովորեք և գիտակցեք, թե ինչ լուրջ բնագավառ էք ընտրել: Եվ եթե զգում եք, որ դա ձերը չէ, մի ամաչեք, ավելի լավ է ճանապարհի կեսից ետ դառնալ, քան հետագայում գղջաք ձեր կատարած ընտրության համար:

Զրուցեց Լուսինե Ոսկանյանը

«ՄԻՆԻ ՄՈՒՆՂՈՒՍ»



«Մինի Մունդուս» անվանումը բաղկացած է երկու մասից՝ «մինի», որը լատիներեն նշանակում է փոքր, նվազագույն, և «մունդուս»՝ աշխարհ, այսինքն «Փոքր աշխարհ»: Այսպես է կոչվում մի յուրահատուկ բացօթյա թանգարան, որը գտնվում է Ավստրիայում, Վյորտերգեե լճի ափին:

Պատմության ընթացքում մարդկությունը ստեղծել է ճարտարապետական բազմաթիվ կոթողներ, որոնք արվեստի իսկական գլուխգործոցներ են: Հնում ճարտարապետական որոշ կոթողներ նույնիսկ համարվել են աշխարհի հրաշալիքներ:

Հազիվ թե որևէ մեկին հաջողվի տեսնել ճարտարապետական բոլոր հիմնական գլուխգործոցները. չէ՞ որ դրանք շատ են և ցրված աշխարհի տարբեր երկրներում: Բայց պարզվում է, որ համաշխարհային ճարտարապետության լավագույն նմուշները կարելի է տեսնել մեկ տեղում՝ Ավստրիայի հարավում գտնվող Կլագենֆուրտ քաղաքի շրջակայքում, Վյորտերգեե լճի ափին ստեղծված «Մինի Մունդուս» թանգարանում: Այստեղ ընդարձակ տարածքի վրա կառուցված են ավելի քան 150 ճարտարապետական գլուխգործոցների մանրակերտեր (մակետներ), որոնք ներկայացնում են բոլոր մայրցամաքների շուրջ 30 երկիր: Աշխարհում իր նմանը չունեցող այս թանգարանն ստեղծվել է Ավստրիայում գործող «Փրկել երեխաներին» հասարակական ընկերության նախաձեռնությամբ: Թանգարանում տարվում է գիտական լուրջ աշխատանք: Յուրաքանչյուր մանրակերտը նույնությամբ կրկնում է իր բնօրինակը 25 անգամ փոքրացված չափերով: Մանրակերտերը կառուցված են բնօրինակների շինանյութից: Թանգարանի աշխատակիցները՝ ճարտարապետներ, նկարիչներ, շինարարներ, այցելում են տարբեր երկրներ, կատարում ընտրված կառույցների չափագրումներ, պատրաստում գծագրեր և հայթայթում են անհրաժեշտ շինանյութեր:

Բացի ճարտարապետության լավագույն նմուշներից, «Մինի Մունդուս»-ում ներկայացված են նաև հայտնի նավերի մոդելներ: Վյորտերգեե լճի ափին կառուցված է մի փոքր նավահանգիստ, որի «խարսխակայանում» կարելի է տեսնել մի քանի նավ՝

սկսած մեծ ծովագնաց Վասկո դա Գամայի առագաստանավից, վերջացած անգլիական «Քուրն մեր»-ի շոգենավով, որը երկար ժամանակ աշխարհի ամենախոշոր նավն էր:

1991թ. «Մինի Մունդուսի» մասնագետները եղան Հայաստանում: Նրանք ցանկանում էին տեղում ծանոթանալ հայ բազմադարյան ճարտարապետությանը, ընտրել այն նմուշը, որի մանրակերտն իր արժանի տեղը կգրավեր թանգարանում: Որոշվեց պատրաստել Մբ. Էջմիածնի Մայր տաճարի մանրակերտը: «Հայաստան-Ավստրիա» ընկերության ջանքերով Ավստրիա ուղարկվեց շինանյութը՝ պահանջվող գույնի տուֆի սալիկները: Եվ 1994թ. հունիսին «Մինի Մունդուս»-ում Ավստրիայում Հայաստանի Հանրապետության դեսպանության աշխատակիցների, Ավստրիայի հայ համայնքի, Ավստրա-հայկական մշակութային ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ Մբ. Էջմիածնի Մայր տաճարի մանրակերտի հանդիսավոր բացումը:



Եթե հաջողվի երբևէ այցելել «Մինի Մունդուս» թանգարան, ապա համաշխարհային ճարտարապետության լավագույն նմուշների շարքում կտեսնեք նաև մեր ժողովրդի ստեղծագործ հանճարի արգասիքը՝ Մբ. Էջմիածնի Մայր տաճարի մանրակերտը:

ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ-120



Երվանդ Քոչարը հայ քանդակագործության և գեղանկարչության ամենանշանավոր ներկայացուցիչներից է, եռաչափ (ծավալային) և կինետիկ գեղանկարչության հիմնադիրներից: Նրա ստեղծագործությունը 20-րդ դարի հետաքրքիր երևույթներից է:

Մի առիթով Պիկասոն ասել է. «Եթե ես Քոչարի եռաչափության զգացումն ունենայի, ապա կզավթեի աշխարհը...»

Այսօր շատերն են համոզված, որ եթե 1936թ. Քոչարը չթողներ Փարիզն ու չստեղծվեի Նորհրդային Հայաստան, ապա նրա անունը իբրև համաշխարհային բրենդ, կդասվեր մշակույթի և արվեստի ամենահանճարեղ անունների կողքին:

Հիշողություններ Երվանդ Քոչարի

«Երբ անցնում էր քաղաքի փողոցներով՝ երկար մազերով, բուրավետ ծխամորճով, ձեռնափայտով, քայլվածքով ու պահվածքով գեղեցկություն էր սփռում շուրջը: Տարբեր էր ամեն ինչով, անգամ դեմքի արտահայտությամբ, որ կարծես ի լուր աշխարհի հայտարարում էր, թե մոտ է արարման պահը: Երվանդ Քոչարի հետ ծանոթացա 1957թ.: Կառավարությունը որոշում էր ընդունել մայրաքաղաքում կառուցելու Սասունցի Դավթի արձանը. ես այդ ժամանակ Երևանի գործկոմի նախագահի տեղակալն էի:

Այն տարիներին, երբ Քոչարը ստեղծում էր «Սասունցի Դավիթը», ոչ հարմարավետ արվեստանոց ուներ և ոչ էլ նյութական ապահովվածություն: Բայց նա հրաշք էր արարում: «Սասունցի Դավիթ» արձանը պետք է գնահատվի որպես ոգու բռնկում:



Հայ քանդակագործության մեջ մի ուրիշ այսպիսի վեհաշուք գործ հայտնի չէ, ուր բացառվում է ամենաչնչին խոտորումն անգամ: Զարմանալի ճշմարտությամբ գտնված է ամեն ինչի տեղն ու չափը: Դիտելով արձանը, հավատում ես Դավթին, նրա առասպելական ուժին՝ Քոչարը կերպարը կերտել է

որպես ժողովրդի երազանքի մարմնավորում, որպես անպարտելիության և գոյատևման կոչ:

Երկրաչափական որոշակի ձև չունեցող արձանի ծավալը նա բաժանեց հազարավոր երկրաչափական անկախ մասերի և ամեն մեկի համար կատարեց հաշվարկ: Այդ տարիներին հաշվողական տեխնիկա գոյություն չունեւ, նա այդ հսկայածաված գործը կատարեց մտքի ու կամքի գերլարումով և աշխատանքը հանձնեց ժպտադեմ, անշահախնդիր, որպես նվեր:

Անմոռաց է այն, ինչ տեղի ունեցավ 1959թ. դեկտեմբերի 3-ին, երբ սպիտակ ծածկոցը ցած քաշվեց Դավթի արձանի վրայից: Կախարդվեց բազմությունը, և հանկարծ բռնկվեց հիացական ծափերի ու խանդավառ բացականչությունների որոտը: Անպատմելի է, թե ինչ տեղի ունեցավ. մարդիկ անվերջ ու անդադար գրկախառնվում էին Քոչարի հետ, համբուրում ձեռքերն ու ճակատը, ծնկի գալիս: Երբ ասպարեզ եկավ աշնակցիների պարի խումբը, ժողովրդի ոգևորությունն ավելի ահագնացավ. կատարվեց անսպասելին՝ հուշարձանի շուրջբոլորը ինքնաբուխ բացվեցին հյուրասիրության սեղաններ. մարդիկ խնդրում էին բաժակ բարձրացնել, միանալ իրենց և կիսել ուրախությունը:

Քիչ արվեստագետների հետ չէ, որ շփվել ու մտերիմ եմ եղել, բայց այլ էր Քոչարը: Նա, եթե կարելի է ասել, մտքամատակարար արվեստագետ էր. տեսնելու, զգալու, ընկալելու և արտահայտելու եզակիորեն հզոր ու ինքնատիպ կարողության տեր էր, հենց իր լինելիությամբ մայրաքաղաքի մտավորականության վրա մի պայծառ երանգ էր ավելացնում:

Քոչարի ապրած ստեղծագործական կյանքը մի ուսանելի դաս է այն մասին, որ իսկական մեծությունները խառը ժամանակներում էլ չեն խոնարհվում, չեն շեղվում, գիտակցում են, թե ինչն է մշտնջենականը, հաստատունը, և հոգու ամրությամբ պաշտպան են կանգնում արվեստի լավագույն արժեքներին»:

Երևանի նախկին քաղաքապետ

*Գրիգոր Հասրաթյանի «Մաէստրո Քոչարը հիշողության
անդրադարձում» գրքից*

ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐ ԲԺՇԿԻՆ

- ❖ Հիվանդությունների կանխարգելումը քո ամենաառաջին պարտքն է: Ներկան ու ապագան պատկանում է կանխարգելիչ բժշկությանը:
- ❖ Օրգանիզմը ամբողջական համակարգ է: Բուժիր հիվանդ մարդուն և ոչ թե հիվանդությունը:
- ❖ Եթե գիտելիքները չեն լրացվում, նվազում են օրեցօր: Մշտպես ձեռք բեր գիտելիքներ:
- ❖ Վնասակար և վտանգավոր է ցույց տալ, որ գիտես այն, ինչ որ չգիտես: Մի ամաչիր դիմել գործընկերներիդ խորհրդին: Ամեն ինչից վեր դասիր հիվանդի շահերը:
- ❖ Հիվանդին վերաբերվիր այնպես, ինչպես կցանկանայիր, որ քեզ վերաբերվեին հիվանդության ժամանակ: Առանց բարի խոսքի դեղամիջոցները քիչ են օգնում, կամ նույնիսկ, բոլորովին չեն օգնում:
- ❖ Պահպանիր ընկերներիդ հեղինակությունը: Ապաքինվելու հավատը ապաքինման կեսն է:
- ❖ Քննադատությունը դառը դեղ է, բայց ոչ թույն: Մի թաքցրու սխալներդ, մի քողարկիր գործընկերներիդ սխալները: Հիվանդները դրանց համար թանկ են վարձահատույց լինում:
- ❖ Եղիր պայծառ՝ մտքով, մաքուր՝ բարոյականությամբ ու ֆիզիկապես: Նախանձը, փառամոլությունը և պատվամոլությունն անհամատեղելի են քո մասնագիտությանը:

Պյոտր Բեյլի «Բժշկի պատվիրանները» գրքից